**Արձանագրություն N 2**
**ՀՀ առողջապահության նախարարության 2018 թվականի կարիքների համար անհրաժեշտ ըմպելու ջրի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/24» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

«15» «հունիսի» 2018թ.
ժամը 17:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ — Մ. Մխիթարյան

Հանձնաժողովի անդամներ — Ա. Գրիգորյան

Մ. Համբարձումյան

Հանձնաժողովի քարտուղար — Լ. Սարգսյան

## *1. Ընթացակարգի հայտերի բացման մասին*

---

*(Մ. Մխիթարյան)*

Ընդունել ի գիտություն, որ 01.06.2018թ. հրապարակվել է հրավեր armeps համակարգում: Հայտերի բացումը՝ 08.06.2018թ. ժամը 17:00: Հայտ է ներկայացրել երկու մասնակից:

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Կազմակերպության էլ. հասցե | Կազմակերպության ՀՎՀՀ |
|---|---|---|---|
| 1 | «Էվրի Դեյ» ՓԲԸ | a.hovakimyan@jur.am | 09104669 |
| 2 | «Սփլեշ Ուոթեր» ՍՊԸ | info@splashusa.am | 00136902 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## *2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին*

---

*(Մ. Մխիթարյան)*

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## *3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին*

---

*(Մ. Մխիթարյան)*

Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերի պահանջներին համապատասխան:

«Էվրի Դեյ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

«Սփլեշ Ռութեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ գնային առաջարկի: Գնային առաջարկում ներկայացված «ԱԱՀ» սյունակում նշված 102.930 ՀՀ դրամը չի կազմում «Արժեք» սյունյակում նշված 514.570 ՀՀ դրամի 20%-ը: Ուստի, հիմք ընդունելով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/24» ծածկագրով հրավերի 7.2 կետը, «Սփլեշ Ռութեր» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատվում է անբավարար:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## *4. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին*

---

***(Մ. Մխիթարյան)***

Հարցումներ չեն եղել:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## *5. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին*

---

***(Մ. Մխիթարյան)***

Կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկը ներկայացվում է ստորև.

| Չ/հ | Անվանում | Նախահաշվային | | | «Էվրի Դեյ» ՓԲԸ | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Քանակ | Միավորի գին | Գումար | Միավորի գին՝ առանց ԱԱՀ | Միավորի գին՝ ներառյալ ԱԱՀ | Գումար՝ առանց ԱԱՀ | Գումար՝ ներառյալ ԱԱՀ |
| 1 | Ըմպելու ջուր | 9.025 | 80 | 722.000 | 56,14 | 67,37 | 506.678,54 | 608.014,25 |

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

## *6. Գների նվազեցման շուրջ բանակցությունների մասին*

---

**(Մ. Մխիթարյան)**

Հիմք ընդունելով «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/24» ծածկագրով հրավերի 7.2 կետի 1-ին ենթակետը՝ որոշվեց ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ աշխատանքային օրը՝ 14.06.2018թ. ժամը 17:00-ին, «Էվրի Դեյ» ՓԲԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ բանակցությունների:

Բանակցություններին չի ներկայացել «Էվրի Դեյ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ, սակայն նշված կազմակերպությունից ստացվել է նամակ համաձայն, որի վերջինս չի նվազեցնում իր կողմից ներկայացված գնային առաջարկը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:**

## *7. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին*

---

***(Մ. Մխիթարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/24» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Էվրի Դեյ» ՓԲԸ-ին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների մասին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### ***8. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի ենթակետերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին***

---

***(Մ. Մխիթարյան)***

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի պահանջները՝ որոշվեց առաջարկել «Էվրի Դեյ» ՓԲԸ-ին՝ ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա /20.06.2018թ. ժամը 18:00/ ընթացքում ներկայացնել՝ իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

### ***9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին***

---

***(Մ. Մխիթարյան)***

«ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2018/24» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում, փոքր դահլիճում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից հարցման եզրակացությունը և «Էվրի Դեյ» ՓԲԸ-ի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

***Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:***

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------------------- Մ. Մխիթարյան

Անդամներ՝ ---------------------- Ա. Գրիգորյան

---------------------- Մ. Համբարձումյան

Քարտուղար՝ ---------------------- Լ. Սարգսյան